

մնոյն ախտաւից կրքերը, կը զօրացնէր միտքը դիւական յարձակմանց ղէմ, կը մաքրէր խորհրդները, եւ կ'ապահովէր առաքինութիւնը (Մանդ. 30-1. Եզն. 286-7): Այս նպատակաւ եկեղեցին տարւոյն ամբողջ օրերն երեք դասակարգի բաժնած էր, ինչպէս կը ղիտէ Տաթեւացին. ուտիք, որոյ կերակուր էին մսեղէնք. սահք, բանջարով՝ ընդով ու պտղով. եւ միջակ կամ նաւակատիք՝ ձկամբ, ձուով ու կաթով (Քրգ. ձմբ. 603. Հրց. 509): Մեր քննութեան նիւթ՝ վերջին երկուքը պիտի լինին այս տեղ:

1. — Ծագումն պահոց: — Ասոր մուտքն Եկեղեցւոյ մէջ՝ անտարակոյս հրէականէն է, ծանօթ Գատաւորաց ժամանակէն ի վեր (Ի, 26), եւ գործադրուած այլ եւ այլ առթից մէջ՝ զորս պիտի տեսնենք: Յիսուսի աշակերտները չէին պահեր ու կը բամբասուէին Հրէիցմէ, որոց կը պատասխանէր Փրկիչը՝ թէ իւր վերանալէն վերջ պիտի պահէին (Մտթ. Թ, 14-15): Եւ արդարեւ յետոյ կը տեսնենք անոնց պահեցողութիւնը. զոր օրինակ երբ ձեռնադրութիւն պիտի կատարէին (Քրծ. ԺԳ, 3), կամ կամաւորապէս ու շատ ստէպ (Հռ. ԺԳ, 5): Պաւղոս կը գովէ Կորնթացւոց նուիրումն «ի պահս» (Բ Կոր. 9, 5). Եւ